ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040, 0322 22648, vanadzor.lori@mta.gov.am

N 01/9244 30 հոկտեմբեր 2025թ.

«ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի և «ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 26.09.2025թ կնքվել է «Վանաձորի օր համաքաղաքային տոնակատարության կազմակերպման ծառայությունների մատուցման» ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԾՁԲ-25/78-1 ծածկագրով պայմանագիր:

«ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից, ի դեմս տնօրեն Նաիրա Վարդանյանի, փոխադարձ համաձայնությամբ միջոցառման օր է ընտրվել 28.10.2025թ.-ն, սակայն 30.10.2025թ. դրությամբ միջոցառման իրականացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ չի իրականացվել:

30.10.2025 թվականին՝ ժամը 16^{00} դրությամբ, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի բաժնի աշխատակիցների կողմից ստուգվել է Վանաձոր քաղաքի Հայքի հրապարակում «Վանաձորի օր » համաքաղաքային տոնակատարության կազմակերպման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից միջոցառման նախապատրաստական աշխատանքների իրականացումը և պարզվել է, որ որևէ աշխատանք չի կատարվել, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Այսուհետ՝ Օրենսգիրք) 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալները և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշմամբ սահմանված կարգի VII մասի32-րդ կետի 29-րդ ենթակետը.

Տեղեկացնում եմ

Որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 2.119,500 (երկու միլիոն հարյուր տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը և որակավորման ապահովման գումարը՝ 3.179,250 (երեք միլիոն հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացնում եմ նաև, որ մինչև 2025թ. նոյեմբերի 09-ը ներառյալ պայմանագրի կատարման ապահովման 2.119,500 (երկու միլիոն հարյուր տասնինը հազար

հինգ հարյուր) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 3.179,250 (երեք միլիոն հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարների գանձման անհնարինության դեպքում կձեռնարկվի «ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

30.10.2025

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Подписано: PELESHYAN ARKADI 2809790434
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

Կապ. Գլխավոր մասնագետ՝ Լևոն Ղազախեցյան